

—Եւ միշտ աշխատում են: Ինչո՞ւ ո՞ւմ համար: Ոչ որ չգիտէի Տեսնում ես, ինչպէս մարդը հերկում է, և մտածում ես. ահա՛ նա քրտինքի հետ կաթիլ-կաթիլ սպառում է իր յոժը հողի վրայ, իսկ յետոյ կը պառկի նրա մէջ և կը փտի այնտեղ: Ոչինչ էի մնում նրանից, ոչինչ էի տեսնում նա իր դաշտից և մեռնում է, ինչպէս ծնունեց—յիմար: Ի՞նչ է, միթէ նա ծնունեց նրա համար, որ քչփորէ հողը և մեռնէ, չկարողանալով նոյն իսկ գերեզման փորել իր համար: Տեղեկութիւն ունի՞ նա ազատութեան մասին: Դաշտային լայնութիւնն ըմբռնելի՞ է նրա համար: Ծովային ալիքի զրոյցը կուրախացնէ՞ նրա սիրտը: Ի՞նչ, նա ստրուկ էր—հենց որ ծնունեց, ողջ կեանքում էլ ստրուկ մնաց, ահա՛ այդ է բոլորը. ի՞նչ կարող է նա անել իրան (?):.. միայն խեղդամահ լինել, եթէ մի քիչ խելօքանայա:—(էջ 5—6):

Յետոյ շուգրան պատմում է քաջ գնչու Լոյկօ Ջօքարի և գնչուհի Բադդայի ողբերգական պատմութիւնը: Ամբողջը պատմուած է գեղարուեստօրէն և կարդացւում է հետաքրքրութեամբ: Թարգմանութեան լեզուն առհասարակ պարզ բայց խրթնութիւններ չառ կան, հայադրած էէ, բնագրի աղբեցութիւնը նկատելի է: Այսպիսի անկանոնութիւններ կան Ռ՝վ է շիննէ քնգ (?), այդպիսի հնչուն և զգայուն ջութակա: (էջ 14) «Այո՛, այսպէս ահա մի գիշեր նստած ենք մենք և լսում ենք՝ երաժշտութիւն է լողում(?) դաշտով: (?) Լաւ երաժշտութիւն. ջղերում արհիւն էր վառում նրանից և կանչում էր նա (?) մի տեղ: Ջգում էինք բոլորս այդ երաժշտութիւնից մի այնպիսի բան ուզեցինք, (?) որից յետոյ էլ ապրել պէտք չլինէր, կամ եթէ ապրել (?) իբրեւ թագաւոր ամբողջ երկրի վրա:» (էջ 13) Արդեօք ընթերցողն ի՞նչ հասկացաւ:

7. Մ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ. Էսքիզներ. Բագու 1903. 30 էջ.

գ. 5 կոպ.:

Երեսուն էջից բաղկացած այս գրքոյկի մէջ չորս վիպական պատկեր կայ ամփոփուած. 1) «Երեք կոպէկ» 2) «Ետուրալակը» 3) «Գարեջրատանը» և 4) «Սև քաղաքում»: Չորսն էլ համարեա նոյն նիւթն են պարունակում— աղքատ և թշուառ մարդկանց կացութեան նկարագիրը: Նոր ասպարէզ եկած անժանօթ հեղինակը երեւի ուզում է ուսու ժամանակակից վիպագ-

բող և «բօսեակների» կեանքը նկարագրող Գօրկինի հետևողութեամբ գրել:

Պատկերներից առաջին երկուսն այնքան թոյլ և աշակերտական փորձեր են, որ չարժէր հրապարակ բերել. վերջին երկուսից էլ Գարեջրատանը, պատկերը քիչ թէ շատ շնորհքով է գրուած և ապացոյց է, որ հեղինակը դիտելու և տեսածը նկարագրելու ընդունակութիւնից զուրկ չէ: Նկարագրական յեղուն թէև աղբատ, բայց կանոնաւոր է:

8. Վ. ՓԱՓԱՋԵԱՆԾ. Լուր—դա—լուր (Քրդական պօէմա) Բագու. 14 էջ գ. 3 կուպ.:

Այս փոքրիկ պատկերի հիմնական միտքն իսկապէս շատ սովորական և յաճախ կրկնուած վիպական նիւթ է. հովիւը յանգնում է սիրահարուել իւր աղայի աղջկան. աղջիկն էլ փոխադարձաբար սիրում է նրան. խրոխտ աղայի դասակարգային պատիւը վիրաւորուում է և նրա մեքենայութեան զոհ են գնում թէ հովիւը և թէ իւր աղջիկը:

Չնայելով նիւթի պարզութեանը, հեղինակին յաջողուել է մի գեղեցիկ պատկեր նկարել գեղարուեստական վրձինով և քուրդ Հասօի համակրելի ու պարզասիրտ նկարագիրը տալ. Գուրդ Հասօի սրնդի ձայնը դիւթում է ամենքին. բարբերին էր դողացնում, Սև ջրի ալիքները յուզում. Բնութիւնն էր քարացնում, զեփիւտին ողբացնում. ամեն ինչ շարժում ու հրեշտակների նախանձը զրգոտում... Ապրում էր Հասօն պայպէս երջանիկ, հեռու մարդկանցից, ընտելեան գրկում, լեռների կրծքում. Երջանիկ էր նա որպէս մի իշխան, սիրուած իր հօտից և նուիրուած իր երգերին: (էջ 4—5)

Երաժշտութիւնը, ճիշտ է, մեծ ազդեցութիւն ունի ինչպէս մարդկանց, այնպէս էլ անասունների վրայ. յունական դիցաբանութեան մէջ անգամ նկարագրուած է երաժշտութեան այդ յատկութիւնը, որով մարդիկ վայրենի գաղաններին իսկ մեղմացնում էին. սակայն մեր հեղինակը մի փոքր չափազանցութեան է հասցնում, ստիպելով խեղճ ոչխարներին՝ իննսուն և իննը աստիճանից բաղկացած սանդուխքի մինչև մէջտեղը բարձրանալ ի սէր երաժշտութեան:

Փափազեանի յաջող գրուածներից մէկն է Վուրդա-լուրը. արժէ կարդալ: